


U. UHUBEL307

日本古地図一冊



891.995
v. 28

明治三十二年
1938
D.

891.995
15-28
ur

Մ. ՄԱՆՎԵԼՅԱՆ

2011-07

ՏՈԿԻՈՒՑ ԿԻՈՏՈ

Ճապոնական հեյար-

Նկարներ
Հ. ԻՍԱԲԵԿՅԱՆԻ

ՊԵՏՏՐԱՏ

ՀԼԿՑԵՄ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938




3027
39

ՏՈԿԻՈՒՑ ԿԻՈՏՈ

Յերկու հասուիկ կանաչ գորտ
Պետք է գնային Կիոտ,
Փողի բան է, հանաք չի,
Հո չէն թողնի, վոր կորչի:


Ցուպը ձեռները առան,
Գլխարկները թեք դրին,
Լուսաբացի են ծեղին՝
Վեր կացան ու գնացին:
Գնացին ու գնացին,
Շատ ու քիչը չիմացան,
Մի բլուրի դեմ առան:
Այդ բլուրին յերբ հասան՝

Նստեցին հանգստացան,
 Վոր նոր ուժով, յեռանդով՝
 Գազաթն յելնեն մի շնչով:
 Մեկի քունը յերբ տարավ՝
 Մյուսը սաստիկ բարկացավ.
 «Ի՛նչ հորըս ցավն ե, — ասավ,
 Ու նրա տուգած փորին՝
 Հասցըրեց խիստ աքացին:
 Քնած տեղից վեր թռավ,
 Վորտեղ եյին չիմացավ,
 Ցավից սկսեց կվկվալ.
 — Վեր կաց, որը կես յեղավ,
 Մթնով հո չե՞նք մտնի Կիոտ,
 Վոր կոտրենք մեր ձեռն ու վոտ:
 Հազար գործ ունենք եստեղ,
 Թե քնով անցնենք եստեղ՝
 Կդառնանք ծիծաղատեղ:
 Ափալ-թափալ վեր կացան,
 Պորտֆել, ձեռնափայտ առան,
 Վոր մուլթն ընկնելուց առաջ —



Կիտտո մտնեն՝ վստահ, քաջ .
Քար ու փշի չեն նայում,
Քաղց ու ծարավ չեն հարցնում
Մեր գորտերը հաստափոր,
Կիտտո հասնեն վոր աշտոր
Յեվ ուժասպառ ու թուլացած՝
Բլրի գագաթը հասան.
Սմբած փորից վողբածայն
Յելավ խղճուկ կվա-կվան:
— Կվա՛ն - կվա՛ն... — կվաց մեկը,
— Վա՛յ... կվաց մյուսը,
Ու իր տեղից չշարժվեց,
Իսկ փորն անում եր վեց-վեց:
— Ել ճար չկա, ա՛յ փեսաս,
Մեկ ել պիտի վեր կենաս,
Հեշտ ե հիմի սարն իվեր,
Ել ի՞նչ մնաց տնավեր...
— Ո՞ք, ուժ չկա ինձանում,
Թե գնում ես, գնա դու,
Մուրհակներըս հետըդ առ,


Ու թե կարաս մի բան առ,
Թող չկորչեն փողերս,
Շնորհակա՛նլ եմ, աներս:
— Դե վեր ընկիր դու ետեղ,
Յես վոտ առա գնացի.
Թե կարող ես ինձ հասի,
Թե չե՛ ետեղ սպասի:
Ու պորտֆելը կռան տակ,
Ձեռնափայտին հենվելով,
Գագաթի մեծ ծառի տակ
Կանգ առավ նա հեալով,
Վոր քաղաքը տեսնի լուսով:
Մի վոտի վրա դիք կանգնեց
Ու աչքերը լայն չռեց,
Նայեց, նայե՛ց զարմացած
Ու վողջ ձայնով նա կռուաց.
— Մի դեսն արի, փեսա՛ ջան,
Ես ի՞նչ բան ե, դու մի տես,
Թե՛ յես եմ տեսնում եսպես...
Հոգնած փեսան կվկվան,



Փորի վրա քարշ գալով,
 Տանջանքով հասավ նրան,
 Ուզեց բարձրանա վոտքի,
 Ու կվկվաց խղճալի:
 — Մի քիչ քնջ յեղիր, փեսաս,
 Վոտդ եդ քարին դու դեմ տուր,
 Դունչդ հենիր եդ փայտին
 Ու նայիր ես թերմաշին:
 Սա Կիոտոն ե, աման,
 Խելքս չի կտրում մի բան,
 Աչքերս գլուխըս թռան,
 Ինչ Կիոտո, տո ի՞նչ բան,
 Տոկիոն ե ճիշտ նման:
 Փեսա, աներ տնկվեցին,
 Կլոր աչքերը չռեցին
 Ու նայեցին Կիոտին:
 — Ինչ ես տեսնում, փեսա ջան:
 — Բան, վայ քեզ, տղիս տղա,
 Լավ ոյին ե հավատա,
 Եսքան ճամբա գուր յեկանք

Ու կրկին Տոկիո հասանք:
 — Կորան, կորան փողերըս,
 Վեր կաց գնանք, աներըս:
 — Հիմար-հիմար քիչ դուրս տուր,
 Տոկիոն հետևներս մնաց,
 Ակնոցներդ դեսը տուր,
 Իմոնքըս տանը մնաց:
 Քանի անգամ եմ յեղել,
 Ինչքան առևտուր արել,
 Խելքս հո չեմ թուցրել,
 Վո՞նց կարող եմ մոլորել:
 Դգմագլուխ մեր աները
 Հաստ փորը դուրս գցեց,
 Ակնոցները քթին դրեց,
 Վոր լավ տեսնի քաղաքը:
 — Հա, սխալվել եմ, փեսա ջան,
 Վեր կաց, վեր կաց, յետ գնանք,
 Մարդ-մուրդ չտեսնի թող մեզ,
 Թե չե կլինենք սևերես,
 Կասեն Կիոտո գնացին,

Առանց փողի մնացին:
 Ապա տխուր կռուացին,
 Բարկությունից կապտեցին,
 Յերեսները դարձրին՝
 Յեկած ճամբին նայեցին:
 — Տու՛նդ ծակվի, աներս,
 Ես ի՞նչ քաղաք ե դեմս,
 Մի տես, տես հողիդ սիրես...
 Աներ, փեսա փափսան՝
 Վեր տնկեցին քթերը.
 Ճիշտ քթների դեմ-դիմաց՝
 Են կիտտն յերկաց:
 — Կիտտո՞ն ե, կիտտոն գտանք...
 Ուրախությունից թուլ յեղան,
 Իրար վզով փարվեցին,
 Աներ, փեսա պաշպվեցին,
 Վեր կացան գնացին ներքև:
 Գնացին, գնացին ու մեկ ել
 Տեսան Տոկիո յեն հասել:
 Գլուխները կորցրին



Մեր գորտերը հաստափոր.
Խնչպես յեղով չիմացան,
Վոր կրկին Տոկիո հասան:
Դուք բան չասեք են գորտերին,
Յեկեք ասեմ ձեր ականջին,
Կարծեմ դուք ել դեռ չգիտեք,
Սուս կացեք ու ինձ լավ լսեք
Տխմար գորտի աչքերը,
Կլոր-կլոր դուրս պրծած
Ծոծրակին են կպցրած,
Դրա համար ել կանգնած
Նրանք յետ-յետ են նայում,
Առաջինները չեն տեսնում:

302
38

Պայ-իւժը քեզ

Տեխ. խմբագիր՝ Ա. Ն. Գառապույան
Սրբազրէ՛՜ Վ. Ավագյան



Գլավիտի լիազոր՝ № 4 4642 Հրպատ № 4315. Պատվեր 1192
Տիրաժ 4000. Թուղթ 74×100. Տպագր. 1/2 մամ. Մեկ
մամուլում 300 0 նիշ. Հեղինակային 1/3 մամ. Գինը 70 կոպ.

Պետհրատի առաջին տպարան, Յերեան, Լենինի, 65

Երբ գրեցիք ~~...~~
 Ինչպես կարող եք հասնել
 Երբ կրկին երկինքը հասնում
 Երբ քանի անգամ եք գրել ինձ
 Երբ անհամար եք անում ինձ
 Երբ անհամար եք անում ինձ
 Երբ անհամար եք անում ինձ
 Երբ անհամար եք անում ինձ
 Երբ անհամար եք անում ինձ
 Երբ անհամար եք անում ինձ
 Երբ անհամար եք անում ինձ
 Երբ անհամար եք անում ինձ

<< Ազգային գրադարան



NL0408251

11078

14

4500 70 ч.



М. МАНБЕЛЯН
ИЗТОКНОРНИОТО
ИЗ АРМ. ССР ЕРЕВАН